

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մարզկենտրոնը՝ ք. Աշտարակ



*Տարածաշրջանները՝*

Աշտարակ,  
Ապարան,  
Արագած,  
Թալին

*Քաղաքները՝*

Աշտարակ,  
Ապարան,  
Թալին

**ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքները**

*(հունվարի 1-ի դրությամբ)*

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Աշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2005	2006	2007	2008	2009
Ապարան	1995	60	6.6	6.6	6.6	6.6	6.6
Աշտարակ	1963	19	20.7	20.7	20.8	20.8	20.8
Թալին	1995	65	5.6	5.7	5.6	5.7	5.6

**Վարչատարածքային բաժանումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ**

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզկենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ <sup>2</sup>	Համայնքներ			Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ *
				քաղաքային	քաղաքային	գյուղական	
<b>Հայաստանի Հանրապետություն</b>	29743	Երևան	109	48	12	866	-
<b>ՀՀ Արագածոտնի մարզ</b>	2753	Աշտարակ	51	3	-	111	19

\* Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2008թ. ճշգրտված տվյալների:

Տարածքը	2753 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.3%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	111
Քաղաքներ	3
Գյուղեր	117
Բնակչության թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ	141.0 հազ. մարդ
<i>այդ թվում`</i>	
քաղաքային	33.0 հազ. մարդ
գյուղական	108.0 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2008թ.	4.4%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	23.4%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	217921 հա
այդ թվում` վարելահողեր	54157 հա

**ՀՀ Արագածոտնի մարզը** զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 9.3%-ը: **Մարզն** իր անունը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից:

Պատմամշակութային առումով մարզը յուրօրինակ թանգարան է, որտեղ գտնվում են Հայոց պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին բնորոշ պատմական հուշարձաններ: Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցները, Մ.Թ.Ա 3-1 հազարամյակի բնակատեղի Գեղարոտը, Հնաբերդ, Ծաղկահովիտ ուրարտական ամրոցները, Արշակունյաց թագավորների դամբարանները Աղձքում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քաղսիի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Օհանավանքը (5-8-րդ դարեր), Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին Օշականում (5-րդ դար), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի (6-րդ դար) , Գառնահովիտի (6-7-րդ դարեր) ճարտարապետական կոթողները և այլն:

Աշտարակում են գտնվում 7-րդ դարի Ս. Կարմրավոր, 12-րդ դարի Ս. Մարինե, 13-րդ դարի Ս. Ծիրանավոր և այլ եկեղեցիներ: Առ այսօր լավ պահպանված է 17-րդ դարում կառուցված Աշտարակի կամուրջը, իսկ Աշտարակ քաղաքով այսօր էլ անարգել հոսում է ոռոգման միակ աղբյուր, շուրջ 3000 տարվա պատմություն ունեցող ուրարտական ժամանակաշրջանում գցված Մայր առուն:

**ՀՀ Արագածոտնի մարզը** հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Ուշագրավ են հատկապես Ամբերդը, Թալինի մեծ և փոքր Կաթողիկե, Աշտարակի Ծիրանավոր, Սպիտակավոր, ս. Մարինե, ս. Սարգիս և Կարմրավոր, Փարպիի, Օշականի եկեղեցիներն ու վանքերը: Աղձք գյուղում գտնվում է Արշակունիների արքայատոհմի դամբարանը: Օշական գյուղում է գտնվում հայ գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմը: 2005 թվականի մայիսի 21-ին Աշտարակ- Ապարան մայրուղու 20-րդ կիլոմետրին՝ ծովի մակերևույթից 1600 մետր բարձրության վրա, 40մ շառավղով տարածքում բացվեց իր նախադեպը չունեցող Հայոց գրերի՝ Տառարձանների պուրակը՝ նվիրված Մաշտոցյան գրերի 1600-ամյակին:

Մարզում են գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Արագածոտնի մարզը գտնվում է մայրաքաղաք Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև ընկած տարածքում:

**Մարզը** սահմանակից է.

- արևմուտքից՝ պետական սահմանով, Թուրքիային,
- հյուսիսում՝ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերին,
- արևելքից՝ ՀՀ Կոտայքի մարզին, հարավ-արևելքից՝ մայրաքաղաքին
- հարավից՝ ՀՀ Արմավիրի մարզին:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտո-խճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր –Քարակերտ – Գյումրի:

**Մարզի** տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

2008թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- |                       |        |
|-----------------------|--------|
| ➤ արդյունաբերություն` | 1.8 %, |
| ➤ գյուղատնտեսություն` | 7.6 %, |
| ➤ շինարարություն`     | 0.8 %, |
| ➤ մանրածախ առևտու`    | 0.6 %, |
| ➤ ծառայություններ     | 0.4 %: |

**Մարզի տնտեսության** հիմքը **արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են:**

**Արդյունաբերությունը** մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

**Գյուղատնտեսությունը** հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

## Աշտարակ քաղաք

**Մարզկենտրոն Աշտարակ քաղաքը** (մարզկենտրոն է 1995թ.-ից) 2008թ. տարեվերջին՝ 20.8 հազ. բնակիչ) գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք, հիմնադրվել է IX դարում:

Քաղաքը հանդիսանում է Երևան-Գյումրի, Երևան–Սպիտակ ճանապարհների հանգույցը:

Քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի **արքանյակ քաղաք**: Այն մարզի **վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է**:

Աշտարակ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

## Ապարան քաղաք

**Ապարան քաղաքը** (2008թ. տարեվերջին՝ 6.6 հազ. բնակիչ) մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասախ գետի ափին (Երևանից 60 կմ հեռավորությամբ): Ապարան քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի արտադրությունն է:

## Թալին քաղաք

**Թալին քաղաքը** (2008թ. տարեվերջին՝ 5.6 հազ. բնակիչ) գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին (Երևանից 65 կմ հեռավորությամբ): **Քաղաքի տնտեսության** հիմքը թանկարժեք իրերի արտադրությունն է: Քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են հնագույն բնակավայրերի հետքեր (մ.թ.ա. II հազարամյակ):

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը *, մարդ	
		2008թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
Աշտարակ	ք. Աշտարակ	21563	21588
	գ. Մոլունի		
Ապարան	ք. Ապարան	6573	6591
Թալին	ք. Թալին	5665	5668

\* ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	Ագարակ (Աշտարակի տարածաշրջան)		1815	1813
2	Ագարակավան (Թալինի տարածաշրջան)		1036	1036
3	Ալագյազ		462	470
4	Ակունք		598	602
5	Աղծք		1904	1933
6	Անտառուտ		229	254
7	Աշնակ		1192	1206
8	Ավան	• Ավան • Խնուսիկ	892	963
9	Ավշեն		270	285
10	Արագած (Ապարանի տարածաշրջան)		3730	3764
11	Արագածավան (Թալինի տարածաշրջան)		5742	5785
12	Արագածոտն		1105	1178
13	Արա		611	624
14	Արտաշավան	• Արտաշավան • Լուսաղբյուր • Նիգատուն	701	693
15	Արտենի		3490	3512
16	Արուն		1213	1215
17	Արևուտ (նախկինում՝ Բառոժ)		137	135
18	Ափնագյուղ		636	633
19	Բազմաղբյուր		1054	1079
20	Բերքառատ		1043	1035
21	Բյուրական		4550	4561
22	Գառնահովիտ		493	494
23	Գեղաղիր		679	682
24	Գեղաձոր		1325	1329
25	Գեղարոտ		590	595
26	Գետափ		156	151
27	Դաշտաղեմ		662	688
28	Դավթաշեն		757	765
29	Դղմասար		123	160
30	Դիան		126	127
31	Դարևանք		102	159
32	Եղիպատուշ		867	847
33	Եղնիկ		555	535
34	Երնջատափ		691	723

\*\* ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2009թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.4%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
35	Զարինջա		638	648
36	Զովասար		584	493
37	Թաթուլ		884	790
38	Թթուջուր		385	380
39	Թղիկ		118	102
40	Իրինդ		956	961
41	Լեռնապար		660	662
42	Լեռնարոտ		419	430
43	Լուսագյուղ		802	812
44	Լուսակն		177	207
45	Ծաղկահովիտ		2045	2051
46	Ծաղկաշեն		767	779
47	Ծաղկասար		126	127
48	Ծիլքար		569	560
49	Կաթնաղբյուր		1374	1305
50	Կալք		684	680
51	Կանչ		130	133
52	Կանիաշիր		468	452
53	Կարբի		4123	4150
54	Կարմրաշեն		506	517
55	Կաքավաձոր		1156	1140
56	Կոշ		3223	3235
57	Հակո		73	73
58	Հարթավան		1048	1053
59	Հագաշեն		248	240
60	Հնաբերդ		2278	2289
61	Չորագյուղ		312	317
62	Դազարավան		590	595
63	Ճարճակիս		583	575
64	Մաստարա	• Մաստարա • Չորագյուղ	2272	2301
65	Մելիքյուղ		1318	1209
66	Մեծաձոր		102	105
67	Միջնատուն		283	287
68	Միրաք		105	106
69	Ներքին Բագմաբերդ		1412	1397
70	Ներքին Սասունաշեն		978	1034
71	Նիզավան		721	725
72	Նոր Ամանոս		820	840
73	Նորաշեն (Արագածի տարածաշրջան)		1115	1139
74	Նոր Արթիկ		584	587
75	Նոր Եղեսիա		1142	1162
76	Շամիրամ		1610	1597
77	Շենավան		1982	1987
78	Շենկանի		233	237
79	Շղարշիկ		568	565
80	Շողակն (Ապարանի տարածաշրջան)		152	152
81	Ոսկեթաս		531	544
82	Ոսկեհատ		1110	1120
83	Ոսկեվազ		4239	4373
84	Չքնաղ		267	230
85	Պարտիզակ		266	268
86	Ջամշու		287	310

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
87	Զրամբար		177	177
88	Ռ-յա թագա		544	545
89	Սաղմոսավան		208	205
90	Սաղունց		291	296
91	Սասունիկ	• Սասունիկ • Կարին	3456	3362
92	Սարալանջ		247	273
93	Միվիան		276	308
94	Սորիկ		120	115
95	Սուսեր		375	399
96	Վարդաբլուր		635	638
97	Վարդենիս		758	760
98	Վարդենուտ		905	868
99	Վերին Բազմաբերդ		510	487
100	Վերին Սասնաշեն		368	361
101	Վերին Սասունիկ		156	156
102	Տեղեր		236	245
103	Յամաքասար		455	452
104	Ուշի		1650	1700
105	Ուջան		3389	3475
106	Փարպի		2458	2441
107	Քուչակ		2492	2519
108	Օթևան		228	230
109	Օհանավան		2567	2402
110	Օշական		5480	5815
111	Օրգով		535	551



**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ  
ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2008թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	4983	5017
Ծնվածներ, մարդ	135	63	72
Մահացածներ, մարդ	85	40	45
Ամուսնություններ	58	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	32.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	82	33	49
հանրակրթական	1468	698	770
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	35	24	11
նախնական մասնագիտական (արհեստագործական)	32	10	22
միջին մասնագիտական	1	1	0.0
բարձրագույն մասնագիտական	-	-	-
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	22864	...	...
Մարզիկներ, մարդ	38	-	38
Զբաղվածներ, մարդ	4678	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	27	7	20
նրանցից՝ գիտության դոկտոր	2	0.0	2
գիտության թեկնածուներ	7	2	5
ուսուցիչներ	213	165	48
բժիշկներ	17	...	...
միջին բուժանձնակազմ	50	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	95	72	23
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1608	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	428	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	16541	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	542	...	...
Իրավական ոլորտ			

<sup>1</sup> Յուզանիշները հաշվարկային են:

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	22	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	5	X	X
միջին ծանրության	6	X	X
ծանր	11	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X